# ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Բեմի վարագույրները փակ են: Աջ կողմում տեղադրված էկրանին ցուցադրվում է բեմականացվող նյութի համապատասխան Power Point –ով պատրաստած սալիկահանդես: Բեմ են բարձրանում երկու աշակերտ՝ աղջիկ և տղա: Նրանք ներկայացնում են «Ինչ է համացանցը» հարցի մեկնաբանությունները:

**Հաղորդավար 1**- Ինչ է համացանցը (PowerPoint սալիկ 2): Շատերն են փորձում պատասխանել այդ հարցին, օգտվելով համանման և տարածված արտահայտությունից՝ «Համաշխարհային (գլոբալ) սարդոստայն» (PowerPoint սալիկ 3) և դա իրականում ամենևին էլ բանաստեղծական այլաբանություն չէ, պարզապես WWW հապավման (World Wide Web կամ WHEN WHERE WHO) (PowerPoint սալիկ 4) մեկնաբանությունն է: WWW էջերը հիպերտեքստային փաստաթղթեր են: Մեկ ընդհանուր թեմա ներկայացնող, միանման ձևավորում ունեցող և նույն վեբ սպասասարքում տեղակայված վեբ էջերը կազմում են վեբ-կայք: Վեբ էջերը կարելի է «կարդալ» այդ նպատակներին ծառայող հատուկ ծրագրի՝ բրաուզերի օգնությամբ:

Մեզանից շատերի համար համացանցը դա.

- Հաղորդակցում, շփում է: (PowerPoint սալիկ 5) Ինչ-որ մեկը գերված է հասարակական ցանցերով և ժամեր շարունակ §նստած¦ լինելով այնտեղ, փորձում է ձեռք բերել համախոհներ, գտնել համադասարանցիներին և ամենակարևորն այն է, որ համացանցը օժանդակում է որպեսզի մարդիկ հնարավորություն ունենան շփվելու անկախ երկրագնդի ցանկացած վայրում գտնվելու իրողությունից:
- Ժամանց է: (PowerPoint սալիկ 6) Ունկնդրել երաժշտություն, դիտել կինոնկարներ, խաղալ խաղեր:
- Ինքնակրթություն է: Համացանցն, անկասկած ինֆորմացիայի լավագույն աղբյուր է:
- Ինքնաարտահայտման, ինքնազարգացման անձնական ընդունակությունների աճի դրսևորման հնարավորություն է:
- Գնումներ, կամ վճարումներ իրականացնելու վայր է և ինչու ոչ
- Գումար վաստակելու միջոց:

**Հաղորդավար - 2** Որպեսզի ինֆորմացիա փոխանակելիս համացանցին միացված համակարգիչներն միմյանց §գտնեն¦ և ճանաչեն դրանցից յուրաքանչյուրին տրվում է

անհատական հասցե: Համակարգչային սարքի այդ անհատական հասցեն կոչվում է IP հասցե (PowerPoint սալիկ 7) (Internet Protocol Address-համացանցի հաղորդակարգի հասցե): ²յն իրենից ներկայացնում է կետերով իրարից անջատված 4 թվերի համախումբ, որոնցից յուրաքանչյուրը փոխվում է 0-ից 255 տիրույթում: Քանի որ թվերով կազված նման հասցեն դժվար է հիշել Համացանցում նաև URL (Uniform Resaurce locctor ռեսուրսների ունիվերսալ որոշիչ) հասցեներ են օգտագործվում: Այստեղ հասցեի կազմավորման հիմքում ընկած է համացանցին միացված յուրաքանչյուր համակարգչի համար եզակի դոմենային անվանումը, որը կազմվում է պայմանանշաններով, (PowerPoint սալիկ 8) իսկ համակարգչի դոմենային անվանումից դրա IP թվային հասցեի ձևավորումը կատարվում է ավտոմատ՝ անունների դոմենային համակարգի միջոցով:

Համացանցի ամենատարածված ու նշանակալից ծառայությունը էլեկտրոնային փոստն է՝ E-Mail (PowerPoint սալիկ 9): Վերջինս հնարավորություն է տալիս՝ վայրկենապես նամակ, նկար կամ շնորհակալական բացիկ ուղարկել դեպի աշխարհի ցանկացած վայրը:

Համացանցում պահպանվող հսկայածավալ էլեկտրոնային փաստաթղթերը յուրաքանչյուրին հասու դարձնելու համար հատուկ ծրագրեր, այսպես կոչված բրաուզերներ կան (PowerPoint սալիկ 10): Սրանք հնարավորություն են տալիս կայքեր բացելու, հայտեր ձևակերպել, իսկ հայցված կայքը ստանալուց հետո ապահովում են դրանից օգտվելը: Ներկայումս առավել հաճախ կիրառվում եմ Mozilla firefox, Opera, Google Chrome և Windows օպերացիոն համակարգի բաղադրիչ հանդիսացող Internet Explorer բրաուզերները:

Եթե Համացանցում ինֆորմացիա որոնելիս անհրաժեշտ է կայքի հասցեն հայտնի չէ, ապա կարելի է դիմել հատուկ որոնողական համակարգերի՝ որոնիչների օգնությանը (PowerPoint սալիկ 11): Առավել հաճախ կիրառվող որոնման համակարգերից են Google–ը Yahoo–ն Microsoft–ի Bing–ը (PowerPoint սալիկ 12):

**Հաղորդավար 1** - Իսկ հիմա ձեր ուշադրությանն ենք ներկայացնում **«Դատավարություն ընդդեմ Համացանցի»** ներկայացումը:

**Բեմի դասավորվածությունը.** Բեմի կենտրոնում դատավոր, քարտուղար: Դատավորի աջ կողմում 2 ատենակալներ, փորձագետ, անբաստանյալ, պաշտպանող կողմ, իսկ ձախ կողմում մեղադրող կողմ:

**Քարտուղար** – Ոտքի դատարանն է գալիս:

**Դատավոր** - Այսօր լսում ենք դատական գործ ընդդեմ Համացանցի, որը մեղադրվում է դեռահասների վրա վատ ազդեցութուն ունենալու մեջ:

**Մեղադրող** – Շնորհակալություն, Համացանցը մեղադրվում է դեռահասների վրա վատ ազդեցություն թողնելու մեջ, ինչը ես կապացուցեմ:

**Դատավոր** - Խոսքը տրվում է պաշտպանող կողմին:

**Պաշտպանող կողմ** - Շնորհակալություն: Ես պատրաստ եմ ապացուցելու Համացանցի բացարձակ անմեղությունը:

**Դատավոր** - Շնորհակալություն : Լավ կլինի լսել վկաների կարծիքը:

**Քարտուղար** - Ներս է հրավիրվում առաջին վկան:

**Դատավոր** – Ես ձեզ զգուշացնում եմ, որ սխալ վկայության դեպքում դուք կենթարկվեք պատասխանատվության:

**Վկա 1** - Ես յոթերորդ դասարանի աշակերտուհի եմ, ինձ անհրաժեշտ էր նյութ ներբեռնել Համացանցից: Աշխատանքս ավարտել էի: 2 օր անց ես որոշեցի բացել աշխատանքս, չգտա համակարգչում, ամեն կերպ փորձեցի գտնել աշխատանքս, բայց ապարդյուն:

**Դատավոր** - Դուք ավարտեցի՞ք ձեր խոսքը:

**Վկա 1** - Այո:

**Դատավոր** - Մեղադրող կողմից հարցեր կա՞ն վկային:

**Մեղադրող կողմ** – Այո, հարգելի դատավոր. իսկ դուք ի՞նչ եք կարծում ո՞վ է մեղավոր:

**Վկա 1** –Ես այս հարցում միայն Համացանցին եմ մեղադրում միայն իրեն: Իմ համակարգիչ բազմաթիվ վիրուսներ են թափանցել և դա է հենց պատճառը աշխատանքիս կորստի հարցում:

**Մեղադրող կողմ** – Այլևս հարցեր չկան, շնորհակալություն:

**Դատավոր** - Իսկ պաշտպանող կողմը հարցեր ունի՞ վկային:

**Պաշտպանող կողմ** - Այո, հարգելի դատավոր: Ասեք խնդրեմ որտեղից եք վերցրել ձեզ անհրաժեշտ նյութերը:

**Վկա 1** - Ես դրանք վերցրել եմ պատահական կայքերից:

**Պաշտպանող կողմ** - Ես այլևս հարցեր չունեմ, շնորհակալություն:

**Դատավոր** - Ներս հրավիրեք հաջորդ վկային:

**Քարտուղար** - Ներս է հրավիրվում հաջորդ վկան:

**Վկա 2** - Ես բանկային հաշվով գնումներ եմ կատարել լրացնելով իմ տվյալները՝ հեռախոսահամար, տան հասցե, էլեկտրոնային փոստ և այլն: Եվ ահա մի օր ստուգելով իմ բանկային հաշիվը ես նկատեցի, որ բավականին մեծ գումար իմ հաշվեհամարին չէր և դա էլ բավական չէր, իմ կատարած գնումները ինձ չհասան:

**Դատավոր** - Դուք ավարտեցի՞ք:

**Վկա 2** - Այո:

**Դատավոր** - Մեղադրող կողմից հարցեր կա՞ն:

**Մեղադրող կողմ** - Այո, հարգելի դատավոր : Ասացեք խնդրեմ, ձեզ հետ նման դեպքեր եղե՞լ են:

**Վկա 2** – Ոչ ես միշտ էլ կատարել եմ օնլայն գնումներ և այսպիսի բան երբեք չէր եղել:

**Մեղադրող կողմ** - Շնորհակալություն այլևս հարցեր չկան:

**Դատավոր** - Պաշտպանող կողմը հարցեր ունի՞ վկային:

**Պաշտպանող կողմ** –Ոչ:

**Ամբաստանյալ** - Խնդրում եմ հարգել ինձ և չմեղադրել այս կամ հարցում:

**Դատավոր** - Վկա կարող եք զբաղեցնել ձեր տեղը: Ներս հրավիրել հաջորդ վկային:

**Քարտուղար** - Ներս է հրավիրվում հաջորդ վկան:

**Վկա 3** – Ես առանց համացանցի չեմ պատկերացնում իմ կյանքը: Իմ ծնողները արտերկրում են և ես Համացանցի շնորհիվ կարողանում եմ շփվել ծնողներիս հետ: Համացանցի շնորհիվ ես մեղմացնում եմ կարոտը:

**Դատավոր** - Վկա՛, զբաղեցրեք ձեր տեղը:

**Քարտուղար** - Ներս է հրավիրվում չորրորդ վկան:

**Վկա 4** – Իմ երեխան իր ամբողջ օրն անցկացնում է համակարգչի դիմաց, ուշադրություն չի դարձնում իր դասերին: Նա շատ լավ էր սովորում, իսկ հիմա նա ծույլերի կողմն է անցել: Ես տեսնում եմ, որ Համացանցը վատ ազդեցություն է թողնում երեխայիս հոգեբանության վրա և ես պահանջում եմ մեղավոր ճանաչել Համացանցին:

**Դատավոր** - Վկա՛, զբաղեցրեք ձեր տեղը: Լսենք փորձագետի կարծիքը:

**Փորձագետ** - Համացանց կամ Ինտերնետ (անգլ. Internet) աշխարհով մեկ տարածված հասարակության ազատ օգտագործման համար նախատեսված ընդհանուր ցանց է կազմված համակարգչային ցանցերից, որոնք իրականացնում են տվյալների փոխանցում և փոխանակում՝ օգտագործելով ստանդարտեցված Համացանցային հաղորդակարգը: Այն ցանցերի ցանցն է, որը կազմված է միլիոնավոր փոքր մասնավոր և հասարակական ցանցերից (տան ցանցեր, ակադեմիական, բիզնես և կառավարական ցանցեր), որոնց իրար հետ կապում են պղնձյա լարերով, օպտիկա-մանրաթելային կաբելներով, անլար կապով և այլն: Համացանցն իր մեջ պարունակում է հսկայական տեղեկատվական ռեսուրսներ և ծառայություններ, որոնցից են Համաշխարհային Ոստայնի (World Wide Web) հղումների

միջոցով փոխկապակցված էջերը: Համացանցը և Համաշխարհային Ոստայն հասկացությունները շատ հաճախ նույնացվում են, սակայն դրանք նույնանիշներ չեն: Համացանցը միմյանց հետ կապակցված համակարգչային ցանցերի ամբողջություն է, իսկ Համաշխարհային Ոստայնը փոխկապակցված փաստաթղթերի ամբողջություն է, որոնք միմյանց հետ կապված են գերհղումներով և URL- ներով:

**Դատավոր** - Խոսքը տրվում է պաշտպանող կողմին:

**Պաշտպանող կողմ** –Եկեք Համացանցին նայենք նաև մյուս տեսանկյունից: Իսկ ի՞նչ է Ինտերնետի ստեղծումը, եթե ոչ հեղափոխություն ու նորարարություն: Ինտերնետի ստեղծումը, իհարկե, կարևոր է: Մարդիկ բողոքում են Ինտերնետից, բայց իրենք էլ չեն հասկանում, թե ինչքան կարևոր է այն: Մենք կարող ենք արագ տեղեկատվություն ստանալ, կարող ենք վիրտուալ տեսնել մեր հարազատներին, կարող ենք խոսել նրանց հետ և մի փոքր մեղմացնել կարոտը:

**Դատավոր** - Հարգելի ատենակալնե՛ր, դուք լսեցիք կողմերին և վկաներին, խնդրում եմ ներկայացրեք ձեր կարծիքը:

**Ատենակալներ** – Մենք խորհրդակցեցինք և որոշեցինք անմեղ համարել Համացանցին, իսկ մարդկանց կոչ ենք անում գիտենալ համացանցից օգտվելու կանոնները:

**Քարտուղար** - Դատարանը դուրս է գալիս խորհրդակցության: Ոտքի՛, դատարանը հեռանում է որոշում կայացնելու:

Բեմ են բարձրանում 10 աշակերտներ:

**Հաղորդավար 1**-Իսկ հիմա կներկայացնենք Համացանցից օգտվելու կանոնները:

**Աշակերտ 1** - Բացի ընտանիքի անդամներից՝ ոչ մեկին մի վստահեք ցանց մուտք գործելու ձեր գաղտնաբառը. Դա հետագայում կարող է տհաճություններ կամ նույնիսկ փորձանքի հանգեցնել:

**Աշակերտ 2** Համացանցում աշխատելիս սովորեք հարգել այնտեղ ընդունված օրենքները: Դրանք կարող են տարբեր լինել՝ կախված հաղորդակցման միջավայրից: Ծանոթացեք համապատասխան տեղային կանոններին նախքան առաջին հաղորդագրությունն ուղարկելը:

**Աշակերտ 3** Հետևեք ուղղագրական և քերականական կանոններին:

**Աշակերտ 4** Առանց հատուկ անհրաժեշտության համակարգիչները Համացանցին միացրած մի թողեք: Անսահմանափակ Համացանցի կապ ունենալը լավ բան է, սակայն, անընդհատ միացրած մնալու դեպքում մեծանում է վիրուսներով և հետախուզական ծրագրերով համակարգչի վարակվելու հավանականությունը:

Աշակերտ 5 Հարգանքով վերաբերվեք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում եք: Հիշեք, որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է, այլև շատերի համար՝ թանկ:

Աշակերտ 6 Համացանցում ծանոթացած նորահայտ անձի հետ իրական կյանքում հանդիպելը մեծ ռիսկեր է պարունակում, բայց եթե իրականում պատրաստվում եք հանդիպել , գնացեք ծնողների հետ:

Աշակերտ 7 Մի օգտագործեք գաղտնաբառեր, որոնք ուղղակի կապ ունեն ձեզ հետ օրինակ՝ ձեր անունը, ծննդյան թիվը: Կիրառեք չեզոք կամ հնարավորինս բարդ գաղտնաբառեր:

Աշակերտ 8 ՄԻ բացեք էլեկտրոնային փոստի հաղորդագրություններ անծանոթ աղբյուրներից և կասկածելի կցված ֆայլերով: Մի բեռնեք տեղեկատվություն այնպիսի կայքերից, որոնց անվտանգության մեջ համոզված չեք:

Աշակերտ 9 Հարգեք գիտակների խորհուրդները և ինքներդ էլ գիտելիքներով օգնեք այլոց:

Աշակերտ 10 Առանց ծնողների թույլտվության որևէ անձնական ինֆորմացիա ( նշանաբան, անուն- ազգանուն, հեռախոսի համար, հասցե, դպրոցի համար և այլն) մի՛ հայտնեք Համացանցի ձեր նոր ծանոթներին:

Աշակերտ 1 Էլեկտրոնային հաղորդակցության ընթացքում բարեկիրթ եղեք, չէ, որ նույնը սպասում եք հաղորդակցից:

Աշակերտները դուրս են գալիս բեմից, շարունակվում է ներկայացումը:

Քարտուղար - Ոտքի՛, դատարանն է գալիս:

Դատավոր –Այսպիսով, կայացրեցի որոշում, որ Համացանցն ունի շատ օգտակար հատկություններ և որոշվեց անմեղ ճանաչել Համացանցին: Դատական նիստը համարում եմ փակված:

Քարտուղար - Ոտքի:

Հաղորդավար 1 Եվ վերջում լսենք երգ նվիրված Համացանցին

Համացանցը անվտանգ է

Բայց նաև վտանգավոր:

Համացանցում աշխատելիս

Հարգիր օրենքները:

Մի բացիր այն նամակը

Ֆայլը կամ Web էջերը,

Որը դու ստացել ես

Վստահություն չներշչող անձից:

Կրկներգ  Առանց  ծնողների մի հայտնիր ինֆորմացիա

Համացանցի նոր ծանոթին,

Մենք ցանկանում ենք ձեզ օգնել

Սովորեցնել համակարգչից միշտ ճիշտ օգտվել:

Լսիր ու հիշիր ընդմիշտ:

Երաժշտությունը «Խաղ  ու պար» երգի:

Վերջ